52. ՋՈՒԼՀԱԿ

Կէղնի, չէղնի կնիկ մը ու իրիկ մը, իրենց լե ճիժ մը կէղնի։ Իրիկ ջուլհակ կէղնի։

Կնիկ կասե.— Մարդ, էսօր վլացք կէնիմ, տանիք ցորեն կպարզիմ. ճընճուղներ պըտի քշիս, թունդրա կավ լե պըտի շաղիս, ճիժ լե պըտի օրորիս։

Մարդ լե ֆքրավ, բերեց ուր վերև տանիք ծակեց, բերեց էրկան փետրմ հանեց տանքեն, բերեց կապեց ուր դազկրհի մաքուքն, հ՝ետև կավ բերեց, լցեց գուբ ու ճժու ճղոր կապեց թելըմ, կապեց ուր թև, շաբունակեց օտներով կավ շաղել, էրկու ձեռքով մաքուք կթալեր, ճղոր կօրորվեր, տանքի փետ լե կէրթար, կիգար, ճընճրղներ, հավեր չմոտենեին։

Իտա թավուր կէներ՝ թաքավոր գավրեշղրլրղ մտեր էր, ուր լալաի հետ կօլորտեր։ Էկան ռաստ իտա ջուլկի տան։ Տեսան տանիք փետ կէրթեր, կիգեր, ասեց.—Լալա, էտ ի՞նչ է, մտի ներս, տես։

Լալան մտավ ներս, տեսավ, օր ջուլհակ մաքուք կթալե՝ ճղոր կօրորվի, ճիժ լե մեջ ու օտաց տակ կավ կշաղվեր ու փետ լե տանիք կէրթար. կիգար, ճնճղներ, հավեր չմոտենին ցորենին։

Էկավ թաքավորին ասեց.— Ջուլհակն է, նստեր է մաքուք կթալե՝ ճիժ կօրորվի, օտաց տակ լե կավ կշաղվի, փետ լե կապուկ է դազկի փետին, վիրիթիկն կխըլվըլա, զցորեն կպահե, կնիկ լե նստեր է, լվացք կէնե։

Զէտոնք թաքավոր գրեց, առավ զլալեն, գացին։

Ժամըմ մնաց, թաքավոր հ՝ելավ տեսավ ուր քոշկի հ՝առեջ մարդըմ խազեր է ուր բոլոր, էկի նստի մեջտեզ։ Ճամփցուց քանի-քանի մարդ, խոսքըմ չկարցան հասկըցուցին։ Ֆքրավ, լալային ըսեց.—Լալա, էն ջուլ-հակ ճամփցունք, բերինք։

Ճամփեցին, առան էկան։

Թաքավոր կանչեց զջուլհակ, ասեց.— Գնա խոսքըմ հասկըցու իտա մարդուն, չէ՝ քու գլուխ կտրել կիտամ։

Ասեց.— Շատ աղեկ, թաքավոր ապրած, ես խոսք կհասկըցում ըտ մարդուն։

Հ՝ելավ ջուլհակ էկավ, ինք լե խազեց մենձ խազ մը, նստավ մեջտեզ-վերուց էդ մարդ թալեց չախուն ջուլակի հ՝առեջ, ջուլակ լե վերուց ջուխ-տըմ պլ. . .թալեց ընտոր հ՝առեջ։ Հըմի էն հ՝ելավ առավ պըլ. . .ու գնաց։ Տարավ ղէտ պլ. . . տվավ ուր թաքավորին, ասեց.— Ահա քըզի էրկու պըլ. . . կիտանք, ավելին հող չենք իտա։

Թաքավոր ջուհապ ճամփեց էտ թաքավորին, թե՝ հազըր կեցի, կռիվ կուզիմ, էն լե ջուհապ տվեց՝ ես հազիր իմ։

Քոմեցին իրենց ասկըրներ, գացին կըռվու դաշտ։ Ջուլակ լե սաղ-ըրաղամ էրեցին։ Ջուլակ լե կէրթա ճամբախ, ասկըրին թամբահ կէնե, կա-սե.—Ես ինչ օր կէնիմ, դուք լե զէն էրեք։

Ինք ընկեր էր հ՝առեջ, կըլոր քար կիգար հուգանոց, կես հուդանոց, թըղթանոց, էտև դիներ ջուլկի տյուքնի քարերն էր, կքոմեր։ Ասկյարն էլ ուր հետ կքոմեր։

Գացին գետի մը հանդիպան, չըկարնան անցընին։ Էտ քարեր թա-փեցին էտ գետի մեջ, ջրի հ՝առեջ առվավ, ճամբախ էղավ, հ՝ընցան։

Գացին, գացին մեշի մը ռաստ էկան. ղամիշ էր։ Ըտ ղամշըներուց կքաղեր ուր մաքոքին համար, ասկյար լե ուր հետ կքաղեր։ Գացին մե ճըմըլղի ռաստ էկան օր օտք կթալեն, հար փոր կիշներ։ Ջուլհակ ասեց.— Թափեք էտ ղամիշներ էդ տեղ։

Թափեցին, էղավ կամուրջի պես, անցան վըրով։

Գացին, գացին կռվու դաշտ։

Ջուլակ ասեց էն մեկել թաքավորի սադրազամին.—Էդ զտար աս-կերի մեղք հ՝ո՞րի մտնենք, տանք ջարդել։ Ահա ես ու դու արի կռվենք, որս օր սպանվեց, էնի հաղթվոկ։

Գոցեցին էրկուս ուրանց աչքեր, էմալ պայման տրեցին, օր թե ուրանց աչքեր կապեն, կանեն հեռու, վիր նետ վիր քիսավ։

Ջուլակ ուր աչքեր բացեց, տուբարա էրեց էնտոր, զարկեց նետ ու անեղով զսադրաղամ ըսպանեց, ուր կողմ հաղթություն առավ։ Դարձավ ուր թաքավորի մոտ։ Թաքավոր ջուլկին նշան տվեց, էրավ սադրազամ, տբավ ուր կուշտ։

Աստծուց իրեք խնձոր հ՝իշավ. մեկը ասողին, մեկը լսողին, մեկ լե՝ անկաճ անողին։